

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ (1990-2001 ԹԹ.)

ԷԴՈՒՐԴ ԴՈՂՈՍՅԱՆ, ԼԵՎՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Անկախության առաջին շրջանում Հայաստանի առջև ծառայած հիմնախնդիրներից էր հասարակական-քաղաքական կարգի ժողովրդավարացումը, որը ինքնիշխանության հաստատման և ազգային անկախ պետականության հարատևման միակ ուղին է: Անկախ Հայաստանը ծնունդ էր ոչ միայն դեպքերի բացառիկ հաջող ընթացքի հետևանքով տարածաշրջանում ժողովրդավարության բռնկման աստեղային ժամի, այլ նաև ինչպես Հայաստանում ու Արցախում, այնպես էլ Ռուսաստանում կյանքի բուլոր կողմերի ազատականացման գործընթացների, երբ բարենպաստ պայմաններ ստեղծվեցին Լեռնային Ղարաբաղի ազատագրական պայքարի համար:

Հայաստանի անկախության հենց առաջին փաստաթուղթը՝ 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունված «Հայաստանի անկախության մասին հռչակագիրը», աչքի էր ընկնում ժողովրդավարական հիմնարար գաղափարներով, իսկ 9-րդ կետում ուղղակիորեն արձանագրված է. «Հայաստանի Հանրապետությունը իր տարածքում ապահովում է՝ խոսքի, մամուլի, խղճի ազատություն, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատում, բազմակուսակցություն, կուսակցությունների իրավահավասարություն, իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացում»¹:

Ելնելով Անկախության մասին հռչակագրի դրույթներից՝ մոտ երեք ամիս անց՝ 1990 թ. նոյեմբերի 5-ին, ՀՀ Գերագույն խորհուրդն ընդունեց իր բնույթով բացառիկ ժողովրդավարական որոշում՝ «Հայաստանի Հանրապետության պետական մարմինները և պետական ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները, զինվորական ստորաբաժանումները ապաքաղաքականացնելու մասին»², որով, փաստորեն, դրվեց հասարակության մեջ ամեն տեսակի գաղափարական պարտադրանքի բացառման հիմնաքարը: Կենսագործելով Անկախության հռչակագրում արձանագրված նպատակային դրույթները՝ Հայաստանի Գերագույն խորհուրդը 1991 թ. փետրվարի 26-ին ընդունեց «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին»³ օրենքը, որով վերացվեց շուրջ 70 տարի գոյատևած կոմունիստական կուսակցության մենիշխանությունը: Այդ օրենքով Հայաստանի հասարակա-

¹ «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», № 16 (972), 31 օգոստոսի 1990, էջ 5:

² Նույն տեղում, № 21 (977), 15 նոյեմբերի 1990, էջ 7-8:

³ «Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թ թ.)», Եր., 1995, էջ 115-118:

կան-քաղաքական կյանքում իրավաբանորեն ամրագրվեցին բազմակուսակցականության սկզբունքը և հանրապետության քաղաքացիների կողմից կամավորության սկզբունքով ազատորեն հասարակական կազմակերպություններ հիմնելու իրավունքը: Հարկ է նշել, որ Հայ հեղափոխական դաշնակցություն⁴, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան⁵ և Ռամկավար ազատական⁶ կուսակցությունները, օգտվելով հատկապես Անկախության հռչակագրի ընդունումից հետո հանրապետության քաղաքական կյանքի նկատելի ազատականացումից, արդեն 1990 թվականին պաշտոնապես հաստատել էին իրենց ներկայությունը Հայաստանի Հանրապետությունում: Փաստորեն, ազգային ավանդական կուսակցությունների «ներգաղթը» տեղի էր ունեցել հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին օրենքի ընդունումից առաջ և ոչ թե դրանից հետո, ինչպես ներկայացված է խնդրո առարկա հիմնահարցին վերաբերող որոշ հետազոտություններում. օրինակ՝ Ռ. Լ. Ազիզբեկյանի և Գ. Մ. Գեղամյանի կարծիքով, ՀՀԴ, ՌԱԿ և ՍԴ Հնչակյան կուսակցությունների գործունեությունը Հայաստանում սկսվել է 1991 թվականին՝ հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին օրենքի ընդունումից հետո միայն⁷: Բազմակուսակցական համակարգի կայացմանը մեծապես նպաստեց նաև 1991 թ. մայիսի 17-ին ՀՀ ԳԽ ընդունած «Հայաստանի կոմունիստական կուսակցության և նախկին Հայաստանի Լենինյան կոմունիստական երիտասարդական միության ունեցվածքը ազգայնացնելու մասին»⁸ որոշումը, որի կիրարկմամբ ՀԿԿ և ՀԼԿԵՄ ողջ շարժական ու անշարժ ունեցվածքը գույքագրվեց, ազգայնացվեց և հանձնվեց ՀՀ կառավարության տնօրինությանը⁹:

Այսպես, ՀՀ կառավարության 1991 թ. մայիսի 1-ի թիվ 314 որոշմամբ ՀԿԿ կենտկոմի զբաղեցրած շենքը հատկացվեց Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին¹⁰, իսկ Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդի 1991 թ. օգոստոսի 5-ի թիվ 402 կարգադրությամբ Հայաստանի կոմերիտմիության կենտկոմի շենքը հանձնվեց նախարարների խորհրդի գործերի կառավարչության տնօրինությանը¹¹: Առանձին որոշմամբ ՀՀ նախարարների խորհրդին առընթեր գլխավոր արխիվային վարչությանը հանձնվեց ՀԿԿ ողջ արխիվը¹², որի հիմքի վրա էլ ՀՀ կառավարության 1991 թ. դեկտեմբերի 26-ի թիվ 652 կարգադրությամբ առանց պայմանականությունների ու արգելքների ցանկացած քաղաքացու համար մատչելի դարձավ Հայաստանի Հանրապետության հասարակական և քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի պետական

⁴ Տե՛ս «խորհրդային Հայաստան», 25 օգոստոսի 1990:

⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 15 դեկտեմբերի 1990:

⁶ Տե՛ս նույն տեղը, 20 դեկտեմբերի 1990:

⁷ Տե՛ս Ռ. Լ. Ազիզբեկյան, Գ. Մ. Գեղամյան, Հայաստանը 1945-1990 թվականներին, Եր., 1994, էջ 131:

⁸ «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», № 8 (988), 30 ապրիլի 1991, էջ 6-7:

⁹ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 113, ց. 166, գ. 456, թ. 1:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, ց. 165, գ. 306, թ. 1-2:

¹¹ Տե՛ս նույն տեղը, ց. 166, գ. 391, թ. 1:

¹² Տե՛ս նույն տեղը, գ. 456, թ. 1-3:

կենտրոնական արխիվը¹³ և այլն: Միաժամանակ, Հայաստանում ձևավորվող նոր կուսակցություններն ու հասարակական կազմակերպությունները, օգտվելով հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին օրենքով իրենց ընձեռված հնարավորություններից, ձեռք էին բերում գրասենյակային տարածքներ:

Օրենքի ընդունումը մեծ խթան դարձավ հայ հասարակության մեջ ժողովրդավարության կարևորագույն տարրերից մեկի՝ քաղաքական կուսակցությունների և այլ տիպի հասարակական կազմակերպությունների ձևավորման համար: Այդ գործընթացը ծավալվել էր բացառիկ տեմպերով: Այսպես, 1991 թվականին Հայաստանի Հանրապետությունում գործել են հասարակական-քաղաքական 226 միավորումներ¹⁴, իսկ արդեն 1993 թվականի ամռանը հանրապետությունում պաշտոնապես գրանցված էին 32 կուսակցություններ ու հասարակական-քաղաքական միավորումներ և 431 հասարակական կազմակերպություններ¹⁵: Հանրապետությունում քաղաքացիների կողմից հասարակական միավորումների ձևավորման գործընթացը խթանեց ՀՀ ԱԺ-ի 1996 թվականի նոյեմբերին ընդունած «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքը¹⁶: 1998 թվականին ՀՀ-ում գրանցվել և արդեն գործում էին 70 կուսակցություններ ու հասարակական-քաղաքական միավորումներ, ինչպես նաև 1704 ոչ կառավարական հասարակական կազմակերպություններ¹⁷, իսկ 2001 թվականին Հայաստանում գրանցված էին շուրջ 100 կուսակցություններ ու քաղաքական միավորումներ, ինչպես նաև փախստականների, զանգվածային լրատվության, մարդասիրական օգնության, գիտության և կրթության, մարդու իրավունքների, մշակույթի ու սպորտի և այլ բնագավառների 2579 հասարակական կազմակերպություններ¹⁸: Հայաստանում քաղաքական զարգացումներին համընթաց կուսակցությունների համար գլխավոր խնդիր դարձավ անդամների թվի ավելացումը: Քննարկվող ժամանակահատվածում կուսակցությունները, շատ հաճախ արհեստականորեն ուռճացնելով իրենց անդամների թիվը, դադարել էին գաղափարների շուրջը համախմբված մարդկանց ընդհանրություն լինելուց և վերածվել էին ընտրություններ ապահովող կառույցների: Հետզհետե ավելի էր հաճախակիանում անենատարբեր կուսակցությունների ու քաղաքական միավորումների միջև քաղաքական դաշինքների ձևավորումը, սակայն հարկ է նշել, որ այդ կոալիցիաները ևս գերազանցապես ստեղծվում էին ոչ թե գաղափարական, այլ իրավիճակային շահերից ելնելով: Այդպիսով, այդ շրջանի Հայաստանի քաղաքական դաշտին հատուկ էր անկայունությունը: Շատ հաճախ ուղղակի դժվար էր լինում հստակ դասակարգել կուսակցությունները՝ հաղթող և պարտվող, իշխող կամ ընդդիմադիր թևերի: Քննարկվող ժա-

¹³ Տե՛ս նույն տեղը, գ. 625, թ. 1:

¹⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 17 հունիսի 1993:

¹⁵ Տե՛ս նույն տեղը, 9 հուլիսի 1993:

¹⁶ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր», № 21-22 (1121-1122), նոյեմբեր 1996, էջ 4-12:

¹⁷ Տե՛ս «Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1998. Պետության դերը», Եր., 1998, էջ 7:

¹⁸ Տե՛ս «Մարդկային զարգացման ազգային զեկույց. Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում», Եր., 2001, էջ 46:

մանակահատվածում հիմնականում խորհրդարանական ընտրարշավներին մասնակցած կուսակցությունների կողմից հասարակությանը ներկայացված ծրագրերի վերլուծությունից պարզվում է, որ քաղաքական կուսակցությունների պլատֆորմները շատ դեպքերում էապես չէին տարբերվում միմյանցից, որն էլ, բնականաբար, գրեթե անհնարին էր դարձնում հանրապետության քաղաքական համակարգում առանձին կուսակցությունների տեղի ու դերի (կառավարամետ, ընդդիմադիր) հստակեցումը, ինչը բազմիցս արձանագրվել է նաև միջազգային դիտորդական տարբեր առաքելությունների կողմից¹⁹: Անշուշտ, նման իրավիճակը խոչընդոտում էր Հայաստանում քաղաքական համակարգի զարգացմանը: Սակայն, այնուամենայնիվ, քննարկվող փուլում քաղաքական որոշակի գործընթացներում ինչ-որ չափով առավել ընդհանուր ձևով ուրվագծվում էին հանրապետության քաղաքական դաշտը և այդ դաշտում կուսակցություններից ու հասարակական-քաղաքական կազմակերպություններից յուրաքանչյուրի դերակատարությունը: Այսպես, համեմատաբար արդարացի ընտրություններով ձևավորված ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհրդում ներկայացված 12 կուսակցություններն ու խմբակցությունները խորհրդարանի գործունեության ընթացքում ձևավորել էին երկու հիմնական քաղաքական թև: Մեկը, այսպես կոչված, աջ ուղղությունն էր՝ ՀՀԾ-ի գլխավորությամբ, որի մեջ մտնում էին ազատական-դեմոկրատական և ազատ շուկայական տնտեսության ջատագով կուսակցություններն ու հասարակական-քաղաքական այլ կազմակերպություններ, իսկ մյուս թևում «Ազգային դաշինքն» էր, որտեղ ընդգրկված էին իշխանություններին ընդդիմադիր սոցիալ-դեմոկրատական կողմնորոշմամբ կուսակցություններն ու հասարակական-քաղաքական այլ կազմակերպություններ²⁰: Հայաստանի Հանրապետությունում քաղաքական առումով ամենաաշխույժ ժամանակահատվածում՝ 1998 թվականին, Հայաստանի քաղաքական գունապնակը բաժանված էր մի քանի խմբերի: Ձախ կողմնորոշման կուսակցություններից էին Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, Հայաստանի առաջադիմական կուսակցությունը և այլն, ձախակենտրոն խմբի մեջ էին մտնում ՍԳ հնչակյան, Հայ հեղափոխական դաշնակցություն և այլ կուսակցություններ ու հասարակական-քաղաքական կազմակերպություններ, աջակենտրոն և աջ բնույթի կուսակցություններ էին Հայաստանի ռամկավար ազատականները, Լիբերալ ժողովրդավարները, Քրիստոնեա դեմոկրատները, Հայոց համազգային շարժում հասարակական-քաղաքական կազմակերպությունը և այլն: Կային նաև ազգային հարցերին գերակայություն տվող հասարակական-քաղաքական կազմակերպություններ, ինչպես, օրինակ, Հանրապետական, Ժողովրդավարական կուսակցությունները և այլն, իսկ հիմնականում քաղաքական ուղղվածություն ունեին Հայաստանի ժողովրդական կուսակցությունը, «Արցախ-Հայաստան», «Շամիրամ» հասարակական-քաղաքական միավորումները²¹ և այլն:

Հասկանալի է, որ քաղաքական ուժերի դիրքերի արդարացի գնահատականը կարող էին տալ միայն խորհրդարանական ընտրությունները, եթե

¹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 46:

²⁰ Տե՛ս «Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1995», Եր., 1995, էջ 40-41:

²¹ Տե՛ս «Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1998, Պետության դերը», էջ 30:

դրանք տեղի ունենային, իրոք, արդար մթնոլորտում, որի նախադրյալները սկզբունքորեն ապահովված էին տակավին 1990 թ. Հայաստանի Գերագույն խորհրդի ընդունած ժողովրդական պատգամավորների ընտրությունների մասին²² և 1995 թվականի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին»²³ օրենքներով, ինչպես նաև՝ 1999 թ. փետրվարին ընդունած «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով»²⁴: Սակայն, այնուամենայնիվ, անժխտելի է, որ հանրապետությունում հիմնովին ու անդառնալիորեն հաստատվել էր ընտրական բազմակուսակցական համակարգ, որ չնայած ամենաբազմազան խոչընդոտներին ու անհարթություններին՝ Հայաստանի քաղաքացիները վերջին հաշվով հնարավորություն ունեին օգտվելու իրենց ձայնի իրավունքից, այսինքն՝ մասնակցելու պետական կառավարման գործընթացներին: Հենց այդ հանգամանքով էր գերազանցապես պայմանավորված քննարկվող ժամանակահատվածում խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցությունների և այլ կազմակերպությունների թվի աննախադեպ աճը: Այսպես, եթե 1995 թվականի համամասնական ընտրություններին մասնակցել են 13 կուսակցություններ, միավորումներ ու կազմակերպություններ²⁵, ապա 1999 թվականին կայացած ԱԺ պատգամավորների ընտրություններին արդեն մասնակցել են 21 կուսակցություններ ու հասարակական-քաղաքական կազմակերպություններ²⁶:

Նորանկախ Հայաստանի առաջին խորհրդարանը, գործունեությունը սկսելով 1990 թվականի հունիսի 20-ից²⁷, ձեռնամուխ եղավ նոր պետականության ստեղծմանը և նպատակասլաց ձևով կյանքի կոչեց ընդհանուր ժողովրդավարական վերափոխումները: Արդեն հիշատակված և մի շարք այլ օրենքներով սահմանված ազատական սկզբունքները նախ և առաջ կենսագործվեցին հենց խորհրդարանում, որի գործունեության սկզբից ևեթ նախանշվեցին ժողովրդավարության հաստատման հիմնական սկզբունքներն ու եղանակները: Այդ իմաստով Հայաստանի Գերագույն խորհրդի գործունեության մեջ առանձնանում է 1991 թ. հուլիսի 8-ին ընդունված աշխատակարգը, որում մասնավորապես նախատեսված էին պատգամավորների կամքի ազատ արտահայտումը, կուսակցական խմբակցությունների, պատգամավորական խմբերի ձևավորումն ապահովող մեխանիզմները²⁸: խմբակցություններին և խմբերին տրված լրացուցիչ իրավունքները պայմաններ ստեղծեցին դրանց արդյունավետ աշխատանքի համար, որով սկզբից ևեթ ապահովվեցին բազմակուսակցականությունն ու խոսքի ազատությունը: Ներխորհրդարանական կուսակցական կյանքի զարգացումների

²² Տե՛ս «Հայկական խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», № 4 (960), փետրվար 1990, էջ 20-43:

²³ Տե՛ս նույն տեղը, № 7 (1083), 15 ապրիլի 1995, էջ 3-33:

²⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», № 2 (68), 18 փետրվարի 1999, էջ 1-118:

²⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 12 հուլիսի 1995:

²⁶ Տե՛ս «Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1999. Մարդկային զարգացման հինգ տարին Հայաստանում», Եր., 1999, էջ 66:

²⁷ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 21 հուլիսի 1990:

²⁸ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», № 13 (993), 15 հուլիսի 1991, էջ 14-46:

լուսաբանման առումով չափազանց կարևոր է այն իրողությունը, որ ՀՀ Գերագույն խորհրդում ընտրվել էին հիմնականում ՀՀԾ-ի ու Կոմկուսի ներկայացուցիչները և մի քանի անկախ պատգամավորներ: Սակայն հանրապետությունում կուսակցությունների ձևավորմանը զուգընթաց պատգամավորների մի մասը աստիճանաբար անդամագրվեց Հայաստանում իրենց գործունեությունը վերահաստատած ավանդական կամ նորաստեղծ մի շարք կուսակցությունների: Ըստ այդմ` խորհրդարանի 259 պատգամավորներից 142-ը տարբեր հասարակական-քաղաքական կազմակերպությունների անդամներ էին²⁹: Նրանք Հայաստանի Հանրապետության առաջին խորհրդարանում ներկայացնում էին 18 կուսակցություններ և հասարակական-քաղաքական կազմակերպություններ: ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի գործունեության ողջ ընթացքում խորհրդարանում գործել են 12 պատգամավորական խմբեր և 5 կուսակցական խմբակցություններ, այդ թվում` «Արցախ», «Ազգային ժողովրդավարներ», «Ազատ խորհրդարանականներ», «Ազգային առաջադիմություն», «Լիբերալ դեմոկրատներ», «Հայ հեղափոխական դաշնակցություն» և այլ պատգամավորական խմբեր, «Հայոց համազգային շարժում», «Հայաստանի կոմունիստական կուսակցություն» և այլ կուսակցական խմբակցություններ³⁰: Իսկ արդեն 1996 թ. 190 տեղանոց ՀՀ Ազգային ժողովում 108 պատգամավորներ ներկայացնում էին 12 կուսակցություններ ու կազմակերպություններ: Աժ-ում այդ նույն ժամանակ գործում էին «Հայոց համազգային շարժում», «Շամիրամ», «Լիբերալ դեմոկրատական կուսակցություն», «Ազգային ժողովրդավարական միություն կուսակցություն», «Ազգային դեմոկրատական միություն», «Սոցիալ-դեմոկրատական կուսակցություն», «Ռամկավար-ազատական-լիբերալ-դեմոկրատական», «Հայ հեղափոխական դաշնակցություն», «Հանրապետական կուսակցություն», «Քրիստոնեա-դեմոկրատական միություն», «Մտավորական Հայաստան», «Ազգային ինքնորոշում միավորում» պատգամավորական խմբերը³¹:

Նորանկախ Հայաստանում բազմակուսակցականության պատմությունը քննարկվող ժամանակահատվածում ուներ երկու արտահայտված փուլ: Առաջինը ընդգրկում էր 1990-1994 թվականները, երբ պետությունը ինչպես իշխանական, այնպես էլ ընդդիմադիր կուսակցությունների ու քաղաքացիական հասարակության մյուս հաստատությունների կայացմանն ու զարգացմանը չէր խոչնդոտում:

Հայաստանի ներքաղաքական կյանքի հաջորդ փուլը սկսվեց 1994 թվականի վերջերին և տևեց մինչև 1998 թվականի սկիզբը` ՀՀ առաջին նախագահի հրաժարականը: Թվում է` չենք սխալվի` նշելով, որ քննարկվող փուլը, որը նշանավորվեց Հայաստանում ժողովրդավարության նկատելի սահմանափակմամբ ու բացահայտ բռնաճնշումներով, որոշակիացավ 1994 թվականին, քանզի երկրի ՀՀԾ-ական իշխանությունների կողմից ազատությունների, մասնավորապես ընդդիմադիր որոշ կուսակցությունների գործունեության սահմանափակումների առանձին դրսևորում-

²⁹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 21 հուլիսի 1991:

³⁰ Տե՛ս նույն տեղը, 4 հուլիսի 1995:

³¹ Տե՛ս նույն տեղը, 20 հունվարի 1996:

ներ սկսվել էին շատ ավելի վաղ: Խոսքը, իհարկե, վերաբերում է Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության նկատմամբ իշխանությունների իրականացրած սադրանքներին ու բռնություններին, որոնք սկսվել էին տակավին 1991 թվականից³²: Ժողովրդավարության տարրական սկզբունքների ոտնահարում ու բացահայտ բռնություն էր ՀՀ նախագահի 1992 թ. հունիսի 29-ի հրամանագիրը ՀՀ Աթենքի բյուրոյի ներկայացուցիչ Հ. Մարուխյանին Հայաստանից արտաքսելու մասին³³: Իշխանավորների հրապարակային ելույթներում, պաշտոնական մամուլի հրապարակումներում ՀՀ-ն նեղադրվում էր ԽՍՀՄ ՊԱԿ-ի և օտարերկրյա գործակալությունների հետ հայադավ կապերի մեջ, կուսակցությանը անհիմն նեղադրանքներ էին ներկայացվում դավադիր հակվածությունների, իշխանատենչության մեջ³⁴ և այլն: ՀՀ-ն նկատմամբ ՀՀ-ն իշխանությունների նախաձեռնած տևական հալածանքների տրամաբանական շարունակությունը դարձավ Լ. Տեր-Պետրոսյանի 1994 թ. դեկտեմբերի 28-ի հրամանագիրը ««Հայ հեղափոխական դաշնակցություն» հասարակական-քաղաքական կազմակերպության գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին»³⁵, որով ավելի քան 3 տարի կասեցվեց Դաշնակցության պաշտոնական ներկայությունը Հայաստանում:

Կասկածից վեր է, որ ՀՀ-ն իշխանությունների այս քայլը ևս վստահաբար կարելի է դասել նորանկախ Հայաստանի իշխանությունների և հատկապես ՀՀ առաջին նախագահի թույլ տված լրջագույն սխալների շարքին:

Դաշնակցության գործունեության արգելումից հետո հանրապետությունում ժողովրդավարության շրջանակների նեղացումը, ինչպես և պետք էր սպասել, շարունակվեց: Հայաստանում ժողովրդավարության ճգնաժամի թերևս առաջին վառ արտահայտությունը 1995 թվականի խորհրդարանական ընտրություններն էին: Այդ ընտրությունները, որոնք պետք է արտացոլեին հանրապետությունում քաղաքական ուժերի դասավորության իրական պատկերը, ինչպես տեղական, այնպես էլ աշխարհի 18 երկրներից³⁶ ժամանած դիտորդների մեծամասնության համոզմամբ, անցան օրենքի աննախադեպ խախտումների, անարդարության ու բռնությունների մթնոլորտում³⁷: Նախ, ինչպես և սպասվում էր, իշխանությունների կողմից ուղղորդվող Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տվյալ ժամանակահատվածում Հայաստանի ամենաազդեցիկ կուսակցություններից մեկին՝ ՀՀ-ին, պարզապես զրկեց համամասնական կարգով ընտրություններին մասնակցելու իրավունքից³⁸: Իսկ արդեն բուն ընտրությունների ընթացքում խորհրդարանում անհրաժեշտ քանակով տեղեր նվաճելու նպատակով ՀՀ-ն իր ընդդիմադիրների նկատմամբ դիմեց բացահայտ ճնշումների: Ձանգվածաբար կեղծվում էին քվեաթերթիկները, բացահայտ ահաբեկման էին ենթարկվում ընտրողներն ու մամուլի ներկայացուցիչները:

³² Տե՛ս նույն տեղը, 19 ապրիլի 1991:

³³ Տե՛ս նույն տեղը, 2 հուլիսի 1992:

³⁴ Տե՛ս նույն տեղը, 4, 8 հուլիսի 1992:

³⁵ «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», № 23-24 (1075-1076), դեկտեմբեր 1994, էջ 10-11:

³⁶ Տե՛ս նույն տեղը, 8 հուլիսի 1995:

³⁷ Տե՛ս «Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1998. Պետության դերը», էջ 22:

³⁸ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 19 հունիսի 1995:

սովորական էր դարձել ընտրակաշառքը³⁹ և այլն: Այդ նույն ժամանակահատվածում հալածանքներ սկսվեցին նաև ընդդիմադիր այլ կուսակցությունների նկատմամբ⁴⁰:

Երկրի ղեկավարությունը բացահայտորեն դրսևորեց ավտորիտար միտումներ. հետևողականորեն ոտնահարվում էր այլախոհությունը, հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում, կարծեք, մշտական գրանցում ստացան պատվիրված քաղաքական դատավարությունները, ընդդիմության առաջնորդների ձերբակալությունները և այլն: Այսպես, 1995 թվականի սկզբից դաշնակցական կուսակցությանը վարկաբեկելու նպատակով պաշտոնական ԶԼՄ-ներում սկսեցին հրատարակել փաստաթղթերի ընդհանուր համատեքստից կտրված պատահիկներ ԶՅԴ, այսպես կոչված, «Դրո» կազմակերպության վերաբերյալ⁴¹: Գործին արհեստականորեն քաղաքական հնչեղություն հաղորդելու նպատակով այդ գործով դատախազությունում ընթացող նախաքննության շրջանում ԶՅԾ-ական իշխանությունները, ակնհայտորեն խախտելով անմեղության կանխավարկածի իրավական նորմը, լրատվամիջոցներում և ամենատարբեր լսարանների առջև փորձում էին «հիմնավորել» Դաշնակցության իբր մեղսագործ էությունը: Այսպես, 1995 թ. մայիսի 18-ին ԶՅ նախագահը խորհրդարանում ունեցած ելույթում հայ ավանդական կուսակցության մասին ի մասնավորի ասաց. «ԶՅԴ-ն քաղաքական կուսակցություն չէ, այլ տեռորիստական ֆաշիստական կազմակերպություն»⁴²: ԶՅԾ-ական իշխանությունների կողմից համապատասխան «ծխածածկույթ» ստեղծելուց հետո, 1995 թ. հուլիսի 7-ին, ԶՅ գերագույն դատարանում սկսվեց «Դրոյի» գործով դատաքննությունը⁴³: Շուրջ մեկ և կես տարի տևած քաղաքական այդ դատավարությունը ավարտվեց 1996 թ. դեկտեմբերի սկզբին, իշխանությունների կողմից կանխավ մշակված ելքով՝ «Դրոն» որակվեց որպես Դաշնակցության կառույցում գործող, դրսից կառավարվող ահաբեկչական կազմակերպություն, իսկ նրա անդամներին մեղսագրվեցին սպանություններ և այլ հանցագործություններ⁴⁴: Ի դեպ, համանման սցենարով ընթացավ նաև ԶՅԴ 30 այլ անդամների դատական գործը, որոնք դատարանի դատավճռով մեղադրվեցին ԶՅ պետական կարգը իբր ուժով տապալելու նպատակադրումներ ունենալու համար⁴⁵ և այլն: ԶՅ իշխանությունների հետապնդումների թերևս ծանրագույն հետևանքը այն էր, որ երկրում և Սփյուռքում բացառիկ համբավ վայելող Հայ հեղափոխական դաշնակցության արգելումն ու վարկաբեկումը, որն իրականացվում էր բացառապես իշխող վարչակարգի քաղաքական հավակնությունները բավարարելու համար, պառակտում էին հայ հասարակությունը:

³⁹ Տե՛ս «Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1998. Պետության դերը», էջ 21-22: «Մարդկային զարգացման ազգային զեկույց. Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում», Եր., 2001, էջ 43-45, «Հայաստանի Հանրապետություն», 7 հուլիսի, 1995:

⁴⁰ Տե՛ս «Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1998. Պետության դերը», Եր., էջ 29:

⁴¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն 6, 7, 12, 13, 19, 20, 21, 24 հունվարի, 4 փետրվարի 1995:

⁴² Նույն տեղում, 19 մայիսի 1995:

⁴³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 8 հուլիսի 1995:

⁴⁴ Տե՛ս նույն տեղը, 11 դեկտեմբերի 1996, 10 փետրվարի 1998:

⁴⁵ Տե՛ս նույն տեղը, 6 մարտի, 18 ապրիլի, 18 հունիսի, 10 հոկտեմբերի 1996:

Ինչպես արդեն նշել ենք, բռնաճնշումը ամենևին չէր սահմանափակվում ԶՅԴ-ով, այլ այն ուղղվեց մյուս բոլոր ընդդիմադիր կուսակցությունների դեմ: Բացի դատական հետապնդումներից՝ ԶՅԸ իշխանավորները հետևողականորեն կիրառում էին ճնշման այլ եղանակներ ևս, ինչպես օրինակ՝ անցանկալի կուսակցություններին ու հասարակական-քաղաքական հաստատություններին պետական ֆինանսական օգնության մերժում, դրանց տպագիր օրգանների նկատմամբ ֆինանսական անհիմն հարկադրանքի կիրառում, ընդդիմադիր կուսակցությունների անդամների նկատմամբ խտրականություն պետական ծառայության բնագավառում⁴⁶ և այլն:

Նորանկախ Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի ազատականացմանը միտված հաջորդ կարևոր իրավական փաստաթուղթը 1991 թ. հունիսի 17-ին Հայաստանի Գերագույն խորհրդի ընդունած «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքն էր⁴⁷: Այդ օրենքի նշանակությունը ավելին էր, քան միայն հասարակության մեջ յուրաքանչյուրին ազատորեն դավանելու իրավունք տալը և այդ դավանանքի նկատմամբ հանդուրժողականության մթնոլորտի հաստատումը: Փաստորեն, ժողովրդին յոթ տասնամյակ պարտադրված աթեիզմից հետո Հայաստանը՝ աշխարհում առաջինը պետականորեն քրիստոնեությունը ընդունած երկիրը, դարձ կատարեց դեպի իր հոգևոր ակունքները: Եվ այդ առումով չափազանց խորհրդանշական էր 1991 թ. սեպտեմբերի 30-ին Էջմիածնի Մայր տաճարում Հայաստանի Հանրապետության պետական դեկավար այրերի մասնակցությունը Հայ առաքելական եկեղեցու ամենամկրակական և ամենահանդիսավոր արարողություններից մեկին՝ սրբալույս Սյուռնուհի օրհնությանը⁴⁸, որից հետո արդեն Հայաստանի պետական առաջին դեմքերի մասնակցությունը առավել նշանավոր եկեղեցական իրադարձություններին դարձավ պարբերական:

Տակավին 1990 թվականին Հայաստանի ինքնիշխան բարձրագույն պետական մարմնի՝ Գերագույն խորհրդի նորընտիր նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի՝ Հայոց վեհափառ Վազգեն Առաջինի կողմից օրհնությամբ ավանդական դարձավ Հայաստանի Հանրապետության Նախագահին կաթողիկոսի կողմից օրհնելու արարողությունը⁴⁹: Նորանկախ Հայաստանի Հանրապետությունում խղճի ազատության ակնառու դրսևորումներից էր նաև ՀՀ նորընտիր Նախագահի երդման արարողության անցկացումը Մատենադարանում պահվող հայերեն հնագույն ձեռագրերից մեկի՝ 7-րդ դարի Վեհամոր Ավետարանի վրա⁵⁰ և այլն:

Խորհրդային շրջանում իշխանությունների պարտադրանքով անկում ապրած եկեղեցական կյանքը Հայաստանի անկախացումից հետո անմիջապես արձանագրեց կտրուկ վերելք, ուստի էապես ավելացավ գործող եկեղեցիների թիվը: 1993 թվականին Հայաստանի Հանրապետության տա-

⁴⁶ Տե՛ս «Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1998. Պետության դերը», էջ 29:

⁴⁷ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.)», Եր., 1995, էջ 136-140:

⁴⁸ «Հայաստանի Հանրապետություն», 1 հոկտեմբերի 1991:

⁴⁹ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 7 օգոստոսի 1990, «Հայաստանի Հանրապետություն», 16 մայիսի 2000:

⁵⁰ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 12 նոյեմբերի 1991, 12 մայիսի 1996, 10 ապրիլի 1998:

րածքում հոգևոր ծառայություն էին մատուցում ավելի քան 70 առաքելական և ռուսական, ասորական և հունական ուղղափառ մի քանի եկեղեցիներ⁵¹: Խղճի ազատության կարևորագույն չափորոշիչներից է նաև հանդուրժողական վերաբերմունքը այլ դավանանքների, քրիստոնեական եկեղեցու այլևայլ ուղղությունների նկատմամբ: 1998 թ. տվյալներով, օգտվելով օրենքով երաշխավորված ազատություններից, Հայաստանում լիարժեք գործունեություն էին ծավալել ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի կողմից գրանցված 45 կրոնական և բարեգործական-կրոնական կազմակերպություններ⁵², որոնք հիմնականում քրիստոնեությունից սերող տարբեր գաղափարախոսություններ էին:

Խոսքի ազատության ճանապարհին կարևորագույն քայլ էր 1991 թ. հոկտեմբերի 8-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի ընդունած «Մամուլի և զանգվածային լրատվության միջոցների մասին» օրենքը, որով սահմանվեց, որ ՀՀ քաղաքացիները իրավունք ունեն հասարակական կյանքի ցանկացած խնդրի վերաբերյալ արտահայտելու իրենց կարծիքներն ու տեսակետները, ստանալու հավաստի տեղեկատվություն: Օրենքի ընդունումը լուրջ խթան դարձավ հանրապետությունում զանգվածային լրատվամիջոցների գործունեության ակտիվացման համար: Կտրուկ ավելացավ դրանց թիվը: Այսպես, եթե ՁԼՄ-ների մասին օրենքի ընդունման տարում՝ 1991 թ., Հայաստանում հաշվվում էր մեկ տասնյակ լրատվամիջոց, ապա 1993 թ. ամռանը, ՀՀ արդարադատության նախարարության լրատվական միջոցների գրանցման բաժնի տվյալներով, ՀՀ-ում կար 278 հեռուստածրագիր, թերթ, ամսագիր, գործակալություն և այլ լրատվամիջոց⁵³: 1994 թվականի փետրվարին դրանց թիվը հասել էր 328-ի, որից 24-ը հեռուստածրագրեր էին, 9-ը՝ ռադիոծրագրեր, 15-ը՝ գործակալություններ, 47-ը՝ ամսագրեր և 232-ը՝ թերթեր⁵⁴, իսկ ընդամենը 7 ամիս անց ՀՀ-ում գրանցված լրատվամիջոցների թիվը արդեն հասել էր 381-ի⁵⁵: 1998 թվականի սկզբներին ՁԼՄ-ների թիվը Հայաստանում հասնում էր 770-ի, գերակշիռ մասը տպագիր մամուլն էր⁵⁶ և այլն:

Բնականաբար, 1994-1997 թվականներին ծավալված ՀՀԾ-ական բռնաճնշումները մեծ հաշվով չչրջանցեցին նաև հասարակական կյանքի, խոսքի, մամուլի ու խղճի ոլորտները: Այդ ամենը և հատկապես ընտրությունների ընթացքում դրսևորված կամայականությունները իրենց վարկաբեկիչ ազդեցություն ունեցան հենց 1995 թվականի օրենքի լրջագույն խախտումներով ընթացած ԱԺ ընտրությունների հետ համատեղ կայացած համաժողովրդական հանրաքվեի միջոցով ընդունված⁵⁷ ժողովրդավարության խորհրդանիշ հանդիսացող Սահմանադրության վրա:

1996 թվականին Հայաստանում սկսվեց ժողովրդավարության որակական նոր փուլ՝ պայմանավորված ՀՀ նախագահական հերթական ընտրու-

⁵¹ Տե՛ս նույն տեղը, 15 հոկտեմբերի 1993:

⁵² Տե՛ս «Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1998. Պետության դերը», էջ 38:

⁵³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 14 հուլիսի 1993:

⁵⁴ Տե՛ս նույն տեղը, 17 փետրվարի 1994:

⁵⁵ Տե՛ս նույն տեղը, 8 սեպտեմբերի 1994:

⁵⁶ Տե՛ս «Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան 1998. Պետության դերը», էջ 38:

⁵⁷ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», № 13-14 (1089-1090), 20 հուլիսի 1995, էջ 3:

թյուններով: Սկզբնական շրջանում նախագահի թեկնածուների թիվը 7 էր⁵⁸, սակայն շատ չանցած ընդդիմադիր թեկնածուներից 3-ը համախմբվեցին ԱԺՄ կուսակցության ղեկավար Վ. Մանուկյանի շուրջը՝ վերջինիս առաջադրելով որպես նախագահական ընտրություններում միասնական թեկնածու⁵⁹: Ինչպես և ակնկալվում էր, կեղծվեցին նաև բացահայտ բռնությունների պայմաններում 1996 թ. սեպտեմբերի 22-ին անցկացված նախագահական ընտրությունների արդյունքները, և Հայաստանի առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, ըստ ԿԸՀ-ի մատուցած տվյալների, ստանալով ընտրությանը մասնակցած ընտրողների ձայների 51,75%-ը և այդպիսով շուրջ 10 տոկոսով առաջ անցնելով հիմնական մրցակցից, վերընտրվեց ՀՀ նախագահ⁶⁰: Դրանից հետո ժողովրդական զանգվածներն ընդդիմադիր քաղաքական ուժերի ղեկավարությամբ սկսեցին հակաիշխանական միտինգներն ու երթերը. մասնակիցները պահանջում էին նախագահական ընտրությունների պաշտոնական արդյունքների բեկանում, ձայների նոր հաշվարկ, իսկ առավել արմատականները՝ ՀՀ նախագահ ճանաչել Վ. Մանուկյանին: Ժողովրդի և իշխանությունների առճակատումը իր գագաթնակետին հասավ սեպտեմբերի 25-ին, երբ 5 հազար ցուցարարների մի մասը ներխուժեց ՀՀ Ազգային ժողովի շենք և բռնարարքներ իրականացրեց խորհրդարանի նախագահի և փոխնախագահի նկատմամբ⁶¹: Իշխանությունները, որոնք կարծես հենց դրան էին սպասում, եղելությունը անմիջապես որակելով որպես հեղաշրջման փորձ, բացահայտորեն սկսեցին զենքի ուժով ժողովրդին հնազանդեցնելու գործողություններ իրականացնել⁶²: Հաջորդ օրը ՀՀ նախագահի հրամանագրով հանրապետությունում արգելվեցին ամեն տեսակի ժողովները, հանրահավաքները, երթերն ու ցույցերը: Սեպտեմբերի 26-ին ՀՀ գլխավոր դատախազի միջնորդությամբ Ազգային ժողովը հավանություն տվեց սեպտեմբերի 25-ի դեպքերի հետ առնչություն ունեցած ՀՀ ԱԺ 8 պատգամավորների քրեական պատասխանատվության ենթարկելու⁶³, իսկ նորաստեղծ Սահմանադրական դատարանը նոյեմբերի 22-ի որոշմամբ մերժեց հանրապետության նախագահի ընտրության արդյունքները և Լ. Տեր-Պետրոսյանի ՀՀ նախագահ ընտրվելու մասին ԿԸՀ-ի որոշումն անվավեր ճանաչելու մասին⁶⁴ ընդդիմության հայցը:

1996 թ. նախագահական ընտրություններից հետո ժողովրդի և պետության միջև շուրջ մեկ և կես տարի տևած սուր առճակատումը հանգեցրեց 1998 թ. փետրվարի 3-ին ՀՀ նախագահի հրաժարականին, որն ընդունվեց խորհրդարանի կողմից⁶⁵ փետրվարի 4-ին: Հայաստանում սկսվեց հասարակական-քաղաքական զարգացումների նոր փուլ: Քաղաքական կյանքի առողջացման ուղղությամբ 1998 թ. մարտի 30-ին նախագահական

⁵⁸ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 23 օգոստոսի 1996:

⁵⁹ Տե՛ս նույն տեղը, 11 սեպտեմբերի 1996:

⁶⁰ Տե՛ս նույն տեղը, 1 հոկտեմբերի 1997:

⁶¹ Տե՛ս նույն տեղը, 26 ապրիլի 1996:

⁶² Տե՛ս նույն տեղը, 27 ապրիլի 1996:

⁶³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր», № 17-18 (1117-1118), սեպտեմբեր, 1996, էջ 10-12:

⁶⁴ Տե՛ս նույն տեղը, № 21-22 (1121-1122), նոյեմբեր, 1996, էջ 27-33:

⁶⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», № 4 (37), 24 փետրվարի 1998, էջ 33:

արտահերթ ընտրությունների երկրորդ փուլում հաղթանակած⁶⁶ Ռ. Քոչարյանի կարևորագույն քայլերից էին նույն թվականի մայիսին Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության պաշտոնական կարգավիճակի վերականգնման մասին հրամանագիրը⁶⁷ և քաղբանտարկյալների ազատ արձակումը⁶⁸: Հայաստանի հասարակության կողմից դրականորեն ընդունվեցին նախկին վարչակազմի հովանավորությամբ կատարված հանցագործությունների քննության ուղղությամբ նոր իշխանությունների ձեռնարկած քայլերը: Քննարկվող ժամանակահատվածում հատկապես մեծ հասարակական հնչեղություն ստացավ բանդիտիզմի, սպանության հանցակցության, պաշտոնական դիրքի չարաշահման և այլ հանցագործությունների մեջ մեղադրվող, համանման անօրինությունների հետ կապ ունեցող մի խումբ անձանց դատավարությունը, որի վերաբերյալ նախաքննությունը սկսվել էր տակավին 1999 թ. հունվարին⁶⁹:

Իշխանությունների ձեռնարկած քայլերի դրական արդյունքներից էր խորհրդարանական նախորդ ընտրությունների համեմատ, դիտորդների համոզմամբ ժողովրդավարության հիմնարար սկզբունքներին ավելի համապատասխան իրականացված 1999 թ. ԱԺ ընտրությունները⁷⁰: Չնայած այն հանգամանքին, որ որոշակի մտահոգություններ եղան ընտրացուցակներում տեղ գտած անճշտությունների, տեխնիկական և կազմակերպական հարցերի վերաբերյալ, այնուամենայնիվ ԵԱՀԿ բազմաճյուղ հիտորիական առաքելության հավաստմամբ 1999 թ. խորհրդարանական ընտրությունները լուրջ առաջընթաց էին, որոնց միջոցով Հայաստանը ավելի մերձեցավ ժողովրդավարության եվրոպական չափանիշներին⁷¹:

Միջազգային դիտորդական առաքելությունների մասնակիցները հատկապես նշեցին, որ 1999 թվականի ընտրությունները ցույց տվեցին, որ նախկինի համեմատ, ընտրությունների բուն ընթացքի հետ կապված, առկա էին էական բարելավումներ, և դրանք անցել էին խաղաղ ու կանոնավոր, առանց ահաբեկությունների⁷²:

Ընդհանուր առմամբ հաջող ընթացան նաև նույն 1999 թ. հոկտեմբերին հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները: Այդ ընտրություններին, ի թիվս տեղական և արտասահմանյան այլ դիտորդների, հետևել էր նաև Եվրոպայի տեղական և տարածքային կառավարման մարմինների խորհրդի և Եվրախորհրդարանի ներկայացուցիչներից կազմված դիտորդական խումբը, որի անդամները, լրագրողների հետ ունեցած հանդիպման ժամանակ նշելով ընտրությունների ընթացքում նկատված առանձին թերությունների, մասնավորապես, առանձին դեպքերում ընտրական գործընթացի վրա թաղային «հեղինակությունների» կիրառած ճնշումների, ընտրացուցակներում տեղ գտած թերությունների և այլնի մասին, միաժամանակ արձանագրել էին, որ 1996 թ.

⁶⁶ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 7 ապրիլի 1998:

⁶⁷ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», № 10 (43), 15 մայիսի 1998, էջ 22:

⁶⁸ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 10, 11 փետրվարի 1998:

⁶⁹ Տե՛ս նույն տեղը, 26, 27 հունվարի 1996:

⁷⁰ Տե՛ս նույն տեղը, 2 հունիսի 1999:

⁷¹ Տե՛ս նույն տեղը, 31 մայիսի, 3 հունիսի 1999:

⁷² Տե՛ս նույն տեղը, 1 հունիսի 1999:

համեմատությամբ 1999 թ. «Տեղական կառավարման մարմինների այդ ընտրությունները ազատ և արդար էին»⁷³:

Հայ հասարակության ժողովրդավարական զարգացումների ընդհանուր առմամբ բարենպաստ ֆոնի վրա ցնցող էր ՀՀ Ազգային ժողովում 1999 թ. հոկտեմբերի 27-ին իրականացված ահաբեկչությունը, որի 8 զոհերի թվում էին նաև «Միասնություն» դաշինքի ղեկավարներ ԱԺ նախագահ Կ. Դեմիրճյանը և ՀՀ վարչապետ Վ. Սարգսյանը⁷⁴:

Ազգային պետականության հիմքերը սասանած, հասարակության մեջ մարդկային չափանիշները խեղած ոճրագործությունը փաստորեն էապես խաթարեց հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը՝ դառնալով քաղաքական առճակատումների պատճառ⁷⁵: Իրավապահ մարմինների կողմից հոկտեմբերի 27-ի գործի քննության շարունակականության պատճառով հասարակության մեջ աստիճանաբար ձևավորվող անվստահության մթնոլորտը⁷⁶ նկատելիորեն փարատվեց, և լարվածությունը հանրապետությունում զգալիորեն թուլացավ իշխանական ղեկավար օղակներում քաղաքական հիմնական ուժերի փոխվստահությունն ամրապնդող կադրային փոփոխությունների⁷⁷ ու նախ և առաջ հանրապետությունում իշխող հասարակական տրամադրությունների հաշվառմամբ՝ ՀՀ կառավարական նոր կաբինետի ձևավորման շնորհիվ⁷⁸:

Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքի հետագա ժողովրդավարացմանն էր միտված ՀՀ ԱԺ 2001 թ. դեկտեմբերի 24-ին ընդունած «Հասարակական կազմակերպությունների մասին»⁷⁹ օրենքը, որը, սատարելով հասարակական կազմակերպությունների՝ որպես իրավաբանորեն կանոնակարգված գործունեություն ծավալող միավորումների, ստեղծմանն ու գործունեությանը, էապես նպաստեց հանրապետությունում հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացմանը:

Ժողովրդավարության ձևավորման ու ամրապնդման ուղղությամբ ՀՀ-ում ընդունված առավել հիմնարար իրավական ակտերի շարքում անհրաժեշտ է նշել նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված և ուրեմն, համաձայն ՀՀ Սահմանադրության, մարդու իրավունքներին վերաբերող Հայաստանի իրավական համակարգի մասը կազմող միջազգային համաձայնագրերը: Այդ կապակցությամբ նշենք, որ Հայաստանի անկախացումից մինչև 2000 թվականը ՀՀ-ն միացել էր մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված համընդհանուր (ՄԱԿ-ի) և տարածաշրջանային 43 միջազգային պայմանագրերի⁸⁰: Այդ գործընթացին մեծապես նպաստեց 1995 թվականից Երևանում գործող Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների և ժողովրդավարության կենտրոնի

⁷³ Նույն տեղում, 27 փետրվարի 1999:

⁷⁴ Տե՛ս նույն տեղը, 28, 30 հոկտեմբերի, 11 նոյեմբերի 1999:

⁷⁵ Տե՛ս նույն տեղը, 11, 13 հունվարի, 11 նոյեմբերի 1999:

⁷⁶ Տե՛ս նույն տեղը, 29 ապրիլի 2000:

⁷⁷ Տե՛ս նույն տեղը, 3, 4, 16 նոյեմբերի 1999, 26 ապրիլի, 3, 13, 23 մայիսի 2000:

⁷⁸ Տե՛ս նույն տեղը, 23 մայիսի 2000:

⁷⁹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», № 42 (174), 27 դեկտեմբերի 2001, էջ 1-19:

⁸⁰ Տե՛ս «Մարդու իրավունքները և մարդկային զարգացումը. գործողություն հանուն առաջընթացի: Մարդկային զարգացման ազգային զեկույց. Հայաստան 2000», Եր., 2000, էջ 34-36:

գործունեությունը⁸¹: Թվում է՝ ավելորդ չէ նշել, որ 2001 թ. մայիսին Հայաստանի Հանրապետությունը ընտրվեց ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի անդամ⁸², որը, ինչ խոսք, միջազգային հանրության կողմից Հայաստանին ցուցաբերվող վստահության դրսևորումներից էր և միաժամանակ Հայաստանի իշխանություններին հորդոր՝ հանրապետությունում ժողովրդավարական, իրավական հասարակության հաստատման և մարդու կենսական իրավունքների պաշտպանության գործընթացների հետագա ծավալման նպատակով:

ЭДУАРД ПОГОСЯН, ЛЕВОН СИМОНЯН. – *Процесс демократических преобразований в общественно-политической жизни Армении (1990–2001)*. – После провозглашения суверенитета в Армении был принят ряд законодательных актов (о свободе слова и совести, о деполитизации общественных организаций, учебных заведений и силовых структур и т. д.). Это создало в стране правовое поле, позволяющее осуществить глубокие демократические преобразования. В статье раскрыто значение этих законодательных актов для формирования гражданского общества, а также показано, что с середины 1990-х годов деятельность властных структур Армении обнаружила признаки авторитаризма, что привело к своего рода диктату правящей политической силы. После смены власти, произошедшей в начале 1998 г., ситуацию в общественно-политической жизни частично удалось исправить.

EDWARD POGHOSSIAN, LEVON SIMONYAN – *The Process of Democratic Reforms in the Socio-Political Life of Armenia (1990-2001)*. – During the process of the acquisition of Armenian independence and in the years immediately following the proclamation of the sovereignty of the Republic of Armenia, the Armenian authorities passed certain laws on the implementation of democratic reforms. Thanks to this, the republic acquired most of the legal framework necessary for the fundamental changes to be carried out in this field. The article reveals what role the laws on the freedom of speech and religion, as well as those on NGOs and on the depoliticization of educational establishments, bodies of armed forces, etc., had in the formation of a civil society in the republic. It also shows that beginning with the mid-1990s, the power structures of Armenia manifested signs of authoritarianism which subsequently grew into a sort of dictate on the part of the ruling political power – the Pan-Armenian National Movement. We also state that the general socio-political life of Armenia was partially improved after the replacement of the authorities in 1998.

⁸¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28 նոյեմբերի 1995:

⁸² Տե՛ս նույն տեղը, 5 մայիսի 2001: